ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/69

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Յասոն» ՍՊԸ-ի կողմից 12.06.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/69 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Յասոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Յասոն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 12.06.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների 21.04.2018թ. հայտ է ներկայացրել նաև «Յասոն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2018թ. ժամը 17:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 6 կետի «ա» ենթակետի համաձայն՝ ընթացակարգի 5-րդ, 12-17-րդ և 19-20-րդ չափաբաժինների մասով Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն կետի «գ» ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Կոմիտե) պարզելու ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու որվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու կամ չունենալու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2018թ. մարտի 29-ի թիվ 3 որոշմամբ (առնվազն անհասկանալի է սույն որոշման կայացման ամսաթիվը) հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, որի համաձայն «Յասոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել ք, քանի որ մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ:

www.gnumner.am կայքում 07.06.2018թ. հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշումը, որի վերջնաժամկետ է նախատեսվել մինչև 12.06.2018թ.:

Ընկերությունը համաձայն չէ վերը նշված որոշումների և Կոմիտեի եզրակացության հետ հետևյալ պատճառաբանությամբ.

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 1 բաժնի 04.05.2018թ. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների մասին թիվ 1550 տեղեկանքի համաձայն՝ դեբետային մնացորդի ավելացված արժեքի հարկը կազմում է 993 908 ՀՀ դրամ:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 1 բաժնի 02.05.2018թ. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված

գումարների և միասնական հաշվում առկա գումարների մասին թիվ 1526 տեղեկանքի համաձայն՝ տուգանքները և վնասի հատուցման գումարը կազմում է 115 491 ՀՀ դրամ, իսկ դեբետային մնացորդի ավելացված արժեքի հարկը կազմում է 1 139 381 ՀՀ դրամ:

3. 14.05.2018թ.-ին «Յասոն» ՍՊԸ-ի տնօրեն Տ. Խուրշուդյանի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ բողոքարկման հանձնաժողովի նախագահ Վ. Միրումյանին ներկայացված գրության համաձայն՝ «Յասոն» ՍՊ ընկերությունը 04.05.2018թ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության գնումների գնահատող հանձնաժողովից ստացել է ստացել է ծանուցում առ այն, որ հարկային հարցման արդյունքում, հարկային ծառայության տրամադրած տեղեկանքում ընկերություն ունեցել է հարկային պարտավորություն, մինչդեռ ընկերության հաշվապահության տվյալներով, բոլոր հարկային պարտավորությունները կատարվել են ժամանակին:

4. Ըստ Ընկերության՝ հարկային պարտավորություններն առաջացել են 18.01.2018թ. միասնական հաշվին փոխանցված 402.3հազար ՀՀ դրամ եկամտային հարկի գումարը, որպես 2017թ. դեկտեմբերի ԱԱՀ գանձելու հետևանքով: Ընկերության միասնական հաշվից գանձվել է նաև 98.5հազար ՀՀ դրամ ոչ ռեզիդենտի շահութահարկ, որը ընկերության կողմից համապատասխան հաշվին է փոխանցվել 16.11.2017թ.:

5. Ընկերությունը ՀՀ ԿԱ ՊԵԿ բողոքարկման հանձնաժողովի նախագահ Վ. Միրումյանից խնդրել է միջամտել և հարկային մարմնի կողմից հաշվառվող, հարկ վճարողի անձնական հաշվի քարտում համապատասխան ուղում կատարել և չեղարկել 10.04.2018թ.-26.04.2018թ. ժամանակահատվածում առկա հարկային պարտավորություն-ները, այլապես ընկերությունը կենթարկվի տուգանքների և կներառվի գնումների մասնակցելու իրավունքից զրկված կազմակերպությունների ցանկում:

6. 27.04.2018թ. «Յասոն» ՍՊԸ-ի տնօրեն Տ. Խուրշուդյանի կողմից ՀՎՍՎ թիվ 1 բաժնի պետ Գ Արանաջյանին ներկայացված գրության համաձայն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի taxservice կայքում տեղադրված հարկային պարտավորությունների էջում, «Յասոն» ՍՊԸ-ի գծով առկա է եղել 115.487 ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որպես չվճարված տուգանք: Ընկերության հաշվապահության տվյալների համաձայն՝ բոլոր հարկային պարտավորությունները, ժամկետային գումարային առումով ճշտգրիտ կատարվել են, ընդ որում ընկերությունն ունեցել է 993.908 ՀՀ դրամ գերավճար: «Յասոն» ՍՊԸ-ի տնօրեն Տ.

Խուրշուդյանը խնդրել է գրավոր պարզաբանել, թե երբ և ինչից է առաջացել վերոնշյալ հարկային պարտավորությունները:

7. 05.05.2018թ. ՀՎՍՎ թիվ 1 բաժնի պետի ժ/պ Գ. Արաբաջյանի կողմից ներկայացված 27.04.2018թ. թիվ 5196 գրության պատասխանի համաձայն՝ «Յասոն» ՍՊԸ-ն 31.12.2017թ.-ի դրությամբ ունեցել է ԱԱՀ-ից դեբետային մնացորդ 1.773.533 ՀՀ դրամ և 385.650 ՀՀ դրամ գրավճար, վերջինս էլ 01.01.2018թ. դարձել է անցումային գերավճար, որից մարվել է 2017թ. դեկտեմբեր ամսվա եկամտային հարկը: Ընկերության կողմից 21.01.2018թ.-26.03.2018թ. ժամանակահատվածում ներկայացվել է 2017թ. հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր և 2018թ. հունվար ամիսների ԱԱՀ-ի ճշտգրտված հաշվարկներ:

Համաձայն ՀՀ կառավարության 2018թ. մարտի 6-ի «ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի N 1271-ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» N 242-Ն որոշման 3-րդ կետի.

«Որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետում նշված դեբետային գումարները՝ բացառությամբ ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով դեբետային գումարների, միասնական հաշվում չեն հաշվառվում: Այդ գումարների բացակայության դեպքում, հաշվանցվում են առանց այդ գումարները միասնական հաշվում հաշվառելու (առանց միասնական հաշվին փոխանցելու)՝ բացառությամբ նույն կետի 5-րդ ենթակետում նշված դեպքի:»:

Վերոգրյալի հիման վրա կազմակերպության հաշվի քարտում 06.02.2018թ. դրությամբ առաջացել է 115 487 ՀՀ դրամ հարկային պարտավորություն:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 46-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ մասը, 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետը, 50-րդ հոդվածի 9-րդ մասը, 51-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետը, 44-րդ, 47-րդ, 48-րդ կետերը:

Ընկերությունը գտնում է, որ «Յասոն» ՍՊԸ-ն բավարարել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին, քանի որ տվյալ դեպքում, Ընկերությունը «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով ընթացակարգի հաղթող է ճանաչվել՝ զբաղեցնելով

առաջին տեղը, սակայն ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից տրված տեղեկանքի պատճառով զրկվել է պայմանագիր կնքելու հնարավորությունից, դրանով իսկ «մեկուսացվելով» պայմանագրի կողմ հանդիսանալուց:

Սակայն Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ իրականում չի ունեցել: Քանի որ հարկային պարտավորություններն առաջացել են ՀՀ ԿԱ ՊԵԿ անփութության արդյունքում՝ 18.01.2018թ. միասնական հաշվին փոխանցված 402.3հազար ՀՀ դրամ եկամտային հարկի գումարը, որպես 2017թ. դեկտեմբերի ԱԱՀ գանձելու հետևանքով: Ավելին՝ Ընկերության միասնական հաշվից գանձվել է նաև 98.5հազար ՀՀ դրամ ոչ ռեզիդենտի շահութահարկ, որը ընկերության կողմից համապատասխան հաշվին է փոխանցվել 16.11.2017թ.:

«Յասոն» ՍՊԸ-ն բողոքով խնդրել է պարտավորեցնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Յասոն» ՍՊԸ-ի հայտը մերժելու և www.gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումները՝ Ընթացակարգի 5-րդ, 12-17-րդ և 19-20-րդ չափաբաժինների մասով:

«Յասոն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.06.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 15.06.2018թ. թիվ ԱԳ/6522-18 գրությամբ ներկայացրել է «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպված «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով

գնման ընթացակարգի շրջանակներում հայտ է ներկայացրել նաև «Յասոն» ՍՊԸ-ն, որը մի շարք չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Յասոն» ՍՊԸ-ի վերաբերյալ ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով հարցում է ուղարկվել ՀՀ ՊԵԿ, որին ի պատասխան ստացվել է տեղեկատվություն «Յասոն» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ (115 487 ՀՀ դրամ): Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, որոշում է կայացրել մերժել «Յասոն» ՍՊԸ-ի գնային առաջարկը, անհրաժեշտ տեղեկատվությունը ներկայացնել լիազորված մարմին և վերագնահատել գնման ընթացակարգի արդյունքները: Գնման ընթացակարգի արդյունքների վերագնահատումն իրականացնելուց հետո հրապարակվել է գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որով «Յասոն» ՍՊԸ-ի գնային առաջարկը մերժվել է:

«ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշումներն ընդունվել են բացառապես ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին համապատասխան, այլ որոշում, քան «Յասոն» ՍՊԸ-ի գնային առաջարկը մերժելը, գնահատող հանձնաժողովը ընդունել իրավասու չէր:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.06.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/69 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/69 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար հայտարարվել է «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Յասոն» ՍՊԸ-ն 21.04.2018թ. հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «Յասոն» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 29.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Յասոն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 115 487 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.05.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի «բ» ենթակետով կայացված որոշմամբ «Յասոն» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով «Յասոն» ՍՊԸ-ի 12.06.2018թ. բողոքը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 15.06.2018թ. թիվ ԱԳ/6522-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է

իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար հայտարարվել է «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Յասոն» ՍՊԸ-ն 21.04.2018թ. հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետով կայացված որոշմամբ «Յասոն» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 24.05.2018թ. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե Ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 29.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Յասոն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 115 487 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.05.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի «բ» ենթակետով կայացված որոշմամբ «Յասոն» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այսպես՝ Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.14-րդ ենթակետով սահմանվել է, որ Կոմիտեն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Յասոն» ՍՊԸ-ն «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: Միևնույն ժամանակ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 29.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Յասոն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 115 487 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

Կարգի 44-րդ կետը սահմանում է, որ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Տվյալ դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով Կարգի 44-րդ կետի և Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.14-րդ ենթակետի պահանջներով, 22.05.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի «բ» ենթակետով կայացրած որոշմամբ «Յասոն» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Այսպիսով՝ գտնում եմ, որ մերժելով «Յասոն» ՍՊԸ-ի հայտը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ և առաջնորդվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի պահանջներով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Յասոն» ՍՊԸ-ի 12.06.2018թ. բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Յասոն» ՍՊԸ-ի կողմից 12.06.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**